ջակից մասերով հասարակաց բաղնիքի վերածած են և մինչև հիմակ կը կոչուի Համամ էս–Սուլթան (Bar. gr. էջ 105-106)։

Այս եկեղեցիին նոր հիմնարկութեան մանրամասնութեանց և ժողովրդային զրոյցներու մասին տեսնել (Բազ. 1906, էջ 511–516)։

6. Պիղատոսի տան աւանդութիւնները. — Ս. Աստուածածնի եկեղեցիին արևելքը կը տեսնուի հաստաշէն մեծ կամար մը՝ ճանապարհին վրայ կառուցուած. զինուորները Պիղատոսի հրամանաւ Յիսուսը Կապպաթա՝ Քարայատակ (Lithostrotos) ըսուած տեղը բերին, ինչպէս կը գրէ Յովհաննէս աւետարանիչ (ԺԹ. 1–6). «Յայնժամ էառ Պիղատոս զՅիսուս և գան եհար։ Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին ի գլուխ նորա, և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի...։» «Ել դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա, ահա ածեմ զսա արտաքս առ ձեզ, զի գիտասջիք՝ թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ։ Ել Յիսուս արտաքս, և ունէր պսակ ի փշոց և հանդերձ ծիրանի. եւ ասէ ցնոսա, ահա այրդ ցձեզ։ Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք, զաղաղակ բարձին և ասեն, ի խաչ հան՝ ի խաչ հան զդա։» Պիղատոս երբ լսեց այս խօսքերը՝ դուրս հանեց Յիսուսը, և նստաւ բեմին վրայ այն տեղին՝ որ կը կոչուէր Քարայատակ, և եբրայեցերէն Կապպաթա. եւ անոնք կ'աղաղակէին «բա՛րձ ի մէնջ, բա՛րձ ի մէնջ եւ հան զդա ի խաչ»։ Ի նշան այս խօսքերուն՝ կամարին արևմտեան կողմը մեծ սալաքարին վրայ տակաւին կ'երևին լատիներէն tollo, (բարձ ի մէնջ) տառերուն գիծերը (Հան. էջ 225)։

Հիմա յիշենք Պիղատոսի Պալատին աւանդութիւն-